անդամ խորհրդարանի Պատուամեծար քաղաքացի Միքայէլ Յարութիւնեան Ստեփանեան, ուստի և հասարակութիւնն ի նոյն իսկ ժողովի ընտրեաց ի տեղի նորա զժամանակաւոր Ա. կարգի վաճառական Մոսկվայի զՍարգիս Դաստեան Ջանումեանց, զոր և հաստատեաց խորհրդարանս։

Հետեւեալքն եւս Նոր-Նախիջեւանի Հայոց Մարդասիրական ընկերութեան Հոգաբարձական խորհրդարանի հաշիւն եւ կարգադրութիւնն է, զոր եւ ըստ սովորականին կհրատարակեմք ի գիտութիւն մերազնէից։

ՀԱՇԻՒ

ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԱՅՈՑ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ՎԱՍՆ 1875 ԱՄԻ։

Խորհրդարանս Հոգաբարձուաց ընկերութեանս համաձայն ԺԵ. յօդուածոյ կանոնադրութեան իւրոյ պատիւ ունի առաջի առնել Գերյարգոյ Անդամոցդ ընդհանուր ժողովոյս անցեալ 1875 ամի տարեկան հաշիւը, յորում բացայայտ կտեսնուին որպէս ընկերութեանս իւր սեպհական մուտքն ու ելքը, նոյնպէս և իւր հովանաւորութեան ներքոյ գտնուած Ս. Խաչ վանուց ժառանգաւորաց դպրոցի եկամուտքն ու ծախքը՝ և ընկերութեան առ 1 ն Յունվարի 1876 տարւոյս ունեցած կարողութիւնը։

Ինչպէս կերևի հաշուեմատենէն, ընկերութիւնս իսկզբան 1875 ամին ունէր դրամագլուխ ի նախընթաց ամաց յաւելեալ 10564 ր. 90 կ.

Ցընթացս 1875 ամի եղեալ են մուտք

	Ր.	Կ.
Ա.—Ի 203 անդամոց տարեկան բաժանորդագինք	1218	
Բ.—Ի 6 նախանձաւոր անդամոց բաժանորդագինք	36	
Գ.—Յանգիրմանցեանց Միքայէլէ ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ բարեբարին իւրոյ Առաքելի Քուշնարեանց միանուագ	120	
Դ.—Ըստ կտակաւանդութեան հանգուցեալ Ռափայէլի Տէր Գարրիէլեան Փոքով ընկալեալ է ի Բարեգործական ընկերութենէն	850	
Ե.—Ի տարեկան տոկոսեաց 18 տոմսակաց արքունի դրամատան և ներքին փոխառութեանց	90	
Զ.—Ի տոկոսեաց առ ձեռն պատրաստի դրամոց ընկերութեանս շահելոց ի ձեռն գանձապահի սորին և ի վաճառաշահութենէն	538	
Է.—Ի Պ. Մկրտչէ Սանասարեանց ընծայաբերեալ ի պէտս կարևոր պակասութեանց ժառանգաւորաց Դպրոցին	400	
Ը.—Ի Տէր Խաչատուր քահանայէ Գասպարեան նուիրեալ ի նոյն պէտս	25	
Թ.—Ի զին գրենոյ թոշակաւոր աշակերտաց Դպրոցիս	66	85
Ժ.—Ի վաճառմանէ աւելորդ կաբասեաց	7	
ԺԱ.—Ի Զմրուխտ տիկնոջէ Նաթալեան հանդերձագին միոյ աշակերտի	30	
ԺԲ.—Ի վարձուց թոշակաւոր աշակերտաց	1477	50
ԺԳ.—Ի Կառավարչէ վանուց սնընդաղրամ վասն ձրիավարժ աշակերտաց և միաբանից Ս. Խաչի վանուցս	600	
Մտից գումարն է	5458	35
Իսկ հանդերձ յաւելուածովքն անցելոց ամաց մտից գումարն է . . .	16023	25

Ծախք յընթացս 1875 ամի են

Ա.—Ի ռոճիկ ուսուցչաց . . .	1427	46
Բ.—Ի սնունդ աշակերտաց և միաբանից վանուցն	1247	56

Գ.—Վասն դասական պիտոյից . 158 80

Դ.— Ի զին ալեր վասն թոշակաւոր աշակերտաց հատուցեալ կառավարչի վանուցն 123 67

Ե.—Վասն հանդերձից և ադանելեաց ձրիավարժ աշակերտաց . . . 188 21

Զ.—Վարձք տնտեսի, խոհարարի, լուացարարի և ծառայից 486

Է.—Վասն կահուց և կարասեաց դասարանաց, սեղանատան և խոհանոցի 189 80

Ը.—Վասն կառաց և երիվարաց· 111 80

Թ.—Վասն նորոգութեանց ի դասարանս և վառարանաց 126 77

Ժ.—Վասն նորոգութեան սառցատան և ախոռի նուիրեալ դրամովք ի Խաչատուր քահանայէ Գասպարեան 24 60

ԺԱ.—Ի շինութիւն նոր սեղանատան և խոհանոցի ընծայարերութեամբ Պ. Մկրտչի Սանասարեանց· 405 70

ԺԲ.—Վասն կառավարութեան խորհրդարանի ի վարձ գործավարի և ծառայի հանդերձ մանր ծախիւք· . 116 95

Ծախուց գումարն է 4607 32

Ծախուց գումարն ի բաց հանելով ի գումարէ տարեկան մտից յաւելեալ է առ 1 Յունվարի 1876 տարւոյս· 851 3

Բաց յայսմանէ ունի ընկերութիւնս

Ա. Տասն տոմսակ առաջին ներքին փոխառութեան ընդ համարօք №№ 38 серія 16029, 16030, 16031, №№ 39 серія 17098, 17099, 17100, 17101, 17102, 17103 և 17104 1300

Բ. Երկու տոմսակ երկրորդ փոխառութեան № 22 серія 15922 և № 46 серія 12081· 300

Գ.—Վեց 5°/₀ տոմսակ արքունի դրամատան 595

Դ.—Պատրաստի գումար դրամոց· 8369 90

Ծախուց գումարը բարդելով մնացած դրամագլխոյն վերայ ընդ ամենը կլինի 16023 95

Յայս հաշուոց կերևի՝ որ 1875 տարւոյ մուտքն ի ծախուց հանելով առ մինն Յունվարի ներկայ 1876 ամի ընկերութեանս կարողութիւնը կրաղկացընեն.

Ա.—Վերանուանեալ տասն երկու առաջին և երկրորդ ներքին փոխառութեանց տոմսակները ի գումար· 1600

Բ.—Վեց 5°/₀ տոմսակք արքունի դրամատան արժողութեամբ . . . 595

Գ.—Առ ձեռն պատրաստի դրամք· 9220 93

Որոց գումարն լինի 11415 93

Խորհրդարանս Հոգաբարձուաց սոյն այս հաշիւը ընդհանուր ժողովոյդ ներկայացնելէն յետոյ, հարկ կհամարի խնդրել դատողութեան տակ ձրգել՝ թէ մէկ կողմանէ ինչ ինչ ուշադրութեան արժանի գործերու ձեռք զարկեր է մէկ տարուայ ընթացքի մէջ և միւս կողմանէ թէ ինչ զգալի պակասութիւններ կան, որոց առաջը առնելոյ համար խորհրդածել անհրաժեշտ հարկ կհամարի, որպէս զի Մարդասիրական ընկերութիւնս մեծամեծ դրժուարութեանց չհանդիպի ապագային. Նախ՝ 1875 թուոյ մէջ բաց ի սովորական եկամտից՝ ընկերութեան արկղը մտել է միանուագ հանգուցեալ Ռափայէլի Տէր-Գաբրիէլեան Փորով կտակաւանդեալ 850 ռուբլի գումարը, այնու պայմանաւ, որ այդ գումարը ձգուի արքունի դրամատուն ի շահեցողութիւն երեսուն տարի ժամանակաւ և տարուէ ցտարի առնուած տոկոսիքը գործածուի ժառանգաւորաց Դպրոցի ձրիավարժ աշակերտաց պիտոյիցը, մայր գումարը անխախտ պահելով.

Խորհրդարանս այս բարերար կտակաւանդողի կամքը կատարելու նպատակաւ որոշեց ընկերութեան գումարէն կտակաւանդեալ 850 ռուբլեաց վերայ այլ ևս 150 ռուբ. յաւելլով, գնել մի 5°/₀ զանձատոմս արքունի դրամատան 1000 ռուբլի

արժէից և զտոկոսիս այնորիկ գործածել համաձայն կտակաւոր աւանդութեան։

Երկրորդ՝ Ազգասէր Մկրտիչ Սանասարեանց մեծանուն պարոնը անցած ամառուան մէջ այցելութիւն առնելով ժառանգաւորաց Դպրոցիս և տեսանելով խոհանոցի և սեղանատան յայտնի պակասութիւնները և տեղւոյն անյարմարութիւնը, բարեհաճել էր ի պէտս Դպրոցին նուիրել 400 ռուբլի, որպէս և անկէ առաջ նոյն նպատակաւ ընծայած էր 25 ռուբլի բարեկրօն Տ. Խաչատուր քահանայն Գասպարեան։ Սոյն այս զրամովք առ շինուածով Դպրոցիս կառուցաւ ի նորոյ մի յարմարաւոր խոհանոց և հին խոհանոցը՝ որ ենջարանի և դասարանաց մէջն էր՝ նորոգելով փոխեցաւ ի սեղանատուն և պատշաճ տեսնուեցաւ այս սեղանատան ճակատը յիշատակագիր մի դնել վերնագրով, թէ նոյնը շինուած է արդեամբ Պ. Մկրտչի Սանասարեանց։ Իսկ ընծայաբերութեամբ Գասպարեան քահանային նորոգեցան սառնատունը և ախոռը՝ որ նոյնպէս կարօտ էին վերանորոգութեանց։

Երրորդ՝ հաշուեցուցակէն կտեսնուի, որ բաց ի յիշեալ նորոգութեանց՝ Դպրոցի վառարաններին, արտաքնոցի և այլն վերայ ընկերութեան զումարէն ևս առանձին ծախք եղած է 126 ռուբլի 77 կոպ։

Հոգաբարձուք ժառանգաւորաց Դպրոցին ակն յայտնի տեսնելով, որ զրամովք ընկերութեան ահնարին իմն է հոգալ Դպրոցի շինուածոյ՝ թողթէ վանքի ամենայն պակասութիւնները, իսկ վանական կառավարութիւնը անձեռնհաս լինի կատարել այն, զեռ անցեալ տարուոյ մէջ, յորդորանօք բարեպաշտոն անդամոց ընկերութեան, սկսել էին առանձին տրովք նոցին առնել պէս պէս շինութիւններ վանուց սրահին մէջ, անոր քայքայեալ տեղերը նորոգելու նպատակաւ. օրինակի համար՝ համարեա ի նորոյ կանգնեցին սրահի արևմտեան որմը և շինեցին նորա վանդակապատ երկաթէ զուռն՝ որ յառաջ չունէր։ Բայց դժբաղդաբար, չկարողացան նոքա դլուխ հանել իւրեանց զովանի ձեռնարկութիւնը զանազան խափանարար պատճառներով՝ որ հանած էր նոցա առջև նախկին վանահայր Մամբրէ վարդապետը։

Իսկ ներկայումս նոյն հոգաբարձուք Դպրոցին նոր վանահօր բարեշնորհ Գրիգորիս վարդապետի հետ խմբասին ժառանգաւորաց Դպրոցի շինուածոյն և վանուց այլ շինուածոց նորոգութեանց և բարեզարդութեան համար, դիմեցին խնդրագրով առ Գերապատիւ Տէր Փոխանորդ Առաջնորդի վիճակիս և ստացան հրաման և ժապաւէնեալ մատեան կամաւոր նուէրք հաւաքելոյ բարեպաշտոն ժողովուրդներէն վերոյիշեալ պէտքերը նորոգելու համար։

Չորրորդ՝ Հոգաբարձուք ժառանգաւորաց Դպրոցի աչքի առաջ ունենալով իւրեանց սուրբ և գլխաւոր պարտականութիւնը և ընկերութեանս իսկ ցանկալի և գերագոյն նպատակը, որ է միշտական զարգացումն և յառաջադիմութիւն խրնամակարօտ զաւակաց ազգիս, ամենայն աշխատութիւն չխնայեցին Դպրոցի բարեվիճակ դրութեան համար։ Իւրեանց օրով ձիրավարժ աշակերտաց թիւը որ առաջ ութն էր, հասուցին տասն և վեցի, թէ և այնու Դպրոցի ծախքը ոչ սակաւ աւելացաւ. թոշակաւոր աշակերտաց թիւը հասուցած են տասներեքի (սոքա ամենքը զիշերօթիկք են), որոյ մէջ նոյնպէս կտեսնուի նոցա ջանքը, պտուղը և դպրոցի աւելի լաւ վիճակի մէջ գտնուիլը, ընդ նմին և քաղաքացւոց համակրութիւնը վաստակելը, որ աւելի արդիւնաւոր համարած են իւրեանց զաւակունքը զիշերօթիկ աշակերտաց վանքի հեռաւոր դպրոցը աւելի ծախք անելով, քան թէ քաղաքի դպրոցները թողուլ համեմատաբար շատ պակաս դնով. այնպէսով մինչև տարւոյ վերջը բոլոր աշակերտաց թիւը եղած է երեսուն և վեց, հաշուելով նոցա մէջ և եօթն երթևեկք։

Ասկէ ինքնիրեն կհետևի թէ ինչպէս Հոգաբարձուք, նոյնպէս և ուսուցիչք ըստ կարելւոյն ճշդութեամբ կատարած են իւրեանց վերայ դրուած սուրբ պարտքերը։

Առանձին ուշադրութիւն դարձուած է նա և եկեղեցւոյն բարեզարդութեան վերայ դրաւիչ երգեցողութեան կողմանէ, որ նոյնպէս զպրոցներէն յառաջ պիտի դայ անշուշտ և որ ժառանգաւորաց Դպրոցի ուսանելի առարկաներէն մէկն է. հր-

բաւիրած են ձայնագրութեան ուսուցիչ ի Ս. Էջմիածնէն ձայնագրագէտ Լևոն Օհանջանեան դըպիրը, որ իւր հասակին բնական եռանդուն և գովելի աշխատութեամբը վեց ամսեան մէջ արդէն ցուցած է այն յառաջադիմութիւնը, որուն դուք ականատես և ականջալուր վկայ էք այսօր։

Ապագային՝ ըստ ինքեան՝ աւելի մսիթարական յոյսեր պէտք է լինին անտարակոյս ընկերութեանը առջև, վասն զի անցեալ Նոյեմբեր ամսէն սկսեալ դպրոցի վերատեսչութիւնը անցած է Վեհափառ Կաթողիկոսէն ընտրուած ու նշանակուած նոր վանահօր բարեշնորհ Գրիգորիս վարդապետի ձեռքը, յորմէ իրաւամբ կ՚յուսացուի որ նա անձանձիր, եռանդուն և արդիւնաւոր հոգացողութեամբ ջանադիր լինի թէ տնտեսական և թէ ուսումնական մասանց մէջ՝ Նորին Օծութեան իւր վկայ ունեցած . . . . Համարումը ըստ ամենայնի արդարացուցանել յիրական մսիթարութիւն սրտի Վեհափառ և ազգասիրաց Հայրապետին մերոյ ի միակ ուրախութիւն և ի գոհութիւն սրտի ընկերութեանս ի նպատակայարմար յառաջադիմութիւն Դպրոցիս մերոյ և ի ճշմարիտ պատիւ և պարծանս անձին իւրոյ և մանաւանդ անձնուրաց կոչմանն՝ որ կայացած է անշուշտ և մի միայն ազգի և նորա խնամակարօտ զաւակացը հոգևոր և բարոյական օգտին վերայ։

Հինգերորդ՝ ընդհանուր ժողովոյդ գերյարգոյ անդամոցը յայտնի է՝ որ Վեհափառ Հայրապետէն հաստատուած ընկերութեանս կանոնադրութեան Էջ յօդուածին համեմատ, Մարդասիրական ընկերութեանս պարտքը ժառանգաւորաց Դպրոցի մէջ մի միայն նորա ուսումնական մասին հարկաւոր ծախքերը և հոգացողութիւնքը անելն է. իսկ միւս ամենայն տնտեսական ծախքերը՝ թէ շինուածոյ և թէ նորա մէջ պատսպարուած աշակերտացը՝ վանական կառավարութեան կընկնէր իսկզբանէ անտի հաստատութեան կանոնադրութեանն և Դպրոցին։

Բայց ժառանգաւորաց Դպրոցի բացուելէն և ժամանակ մի շարունակուելէն ետքը 1869 թիւ, հանգամանաց բերմամբ վանական տնտեսական վարչութիւնը, միճակաւոր առաջնորդի կարգադրութեամբ, յանձնուեցաւ աշխարհական մի պատուաւոր անձի ձեռքը, որ իւր կարողութենէն դուրս համարեց իւր հասակին մէջ, իւր վերայ ծանրացնել նաև Դպրոցիս տնտեսական կառավարութիւնը. ուստի և խորհրդարանս նախագուշութեամբ, որ մի՛ գուցէ ընկերութեան և վանուց նոր բարեշրջոջ Դպրոցը Վեհափառ Հայրապետին և ընկերութեանս նպատակներուն հետ ի միասին իրեւ եղնէ, ստիպուեցաւ զիջանել վանուց կառավարչին առաջարկութեանը, որ էր և է՝ ամի ամի հաստատանել դպրոցի կառավարութեան ի ձեռն խորհրդարանի և հոգաբարձուաց նորա բաւականաչափ ալիւր, վառելիք և վեց հարիւր ռուբլի դրամ, որով հոգացուին միանդամայն և վանահօր ու միաբանից սնունդը և ժառանգաւորաց Դպրոցի ամենայն տնտեսական պիտոյքը, և այս՝ ի ժամանակին որ վեց աշակերտք էին միայն Դպրոցին մէջ, բաւական կհամարուէր նա և յիշեալ գումարը։ Սակայն ինչպէս անցեալ նոյնպէս և այս 1875 տարւոյ խորհրդարանի հաշիւներէն պարզ կերևի, Դպրոցի և միաբանութեան և ծառայից տնտեսական կառավարութեան վերայ և շինուածոյ նորոգութեան համար ծախք արած են հոգաբարձուք ընկերութեան գումարէն մինչև 1000 ռուբլի տարին (ապագային անշուշտ նոյնը պէտք է լինի, եթէ ոչ աւելի) որոյ տեղը ստացուել է վանական կառավարութենէն 600 ռուբլի միայն։ Մեծամեծ դժուարութիւններ յառաջ պիտի բերէ իրեն ընկերութիւն այսպիսի ծախքը, եթէ շարունակուի նաև յայտնի է, (որ ըստ ինքեան անկարելի է պակասցնել, քանի որ հոգաբարձուաց ձեռքը պէտք է լինի սնունդեան ծախքը), նա և պաշարեղինաց օրէ յօր թանկանալովը, մինչդեռ որ գըլխաւորն է, առևտրական գործոց անյաջողութեանց պատճառաւ խորհրդարանի անդամք ընկերութեանս կանոնադրութեան Ե, յօդուածոյ համաձայն, անկարելի կհամարին բոլորովին պատրաստական դրամագլուխը առաջուան տարիներու պէս արդիւնաւոր կերպով շահիցնել վաճառականութեամբ, որ ընկերութեանս արդեանց նշանաւոր աղբիւրներէն մէկն է. ընկերութիւնս, կասենք, մեծամեծ և անդորմանելի դժուարութեանց պի-

տի հանդիպի անշուշտ ապագայի մէջ, մէկ կողմանէ արդեանց աղբիւրը պակասելով, միւս կողմանէ ևս իրեն չափէն և ուժէն դուրս ծախս ունելով դպրոցի և միաբանից սննդեան համար, զոր հոգալը վանական կառավարութեան սեպհական պարտքն է։ Վասն որոյ խորհրդարանս պարտք կհամարի ընդհանուր ժողովրդ առանձին ուշադրութիւնը դարձնել այս ծանրակշիռ հանգամանքիս վերայ, որպէս զի եթէ պատշաճ համարի դա՝ պարտականութիւն դնէ նոր հոգաբարձուաց վերայ, որ այսօր պէտք է ընտրուին, հոգ ունենալ այս ընկերութեան վերայ ծանրացած խնդրոյս վերայ։

Վեցերորդ՝ կարդացուած հաշիւներէն կերևի որ ընկերութիւնս ունի առաջին ներքին փոխառութեան տասն տոմսակ, որ գնահատուած են 130 ական ռուբլիէն՝ 1300 ռուբլի, երկու ևս տոմսակ երկրորդ ներքին փոխառութեան 150 ական ռուբլի գնահատուած՝ որ առնէ 300 ռուբլի. բայց որովհետև այժմ յիշուած ներքին փոխառութեանց տոմսակները 200 ռուբլիէն աւելի արժողութիւն ունին. և մինչև կապահովացուին վիճակահանութեանց ժամանակ, վասնորոյ պատշաճ չի տեսներ արդէօք ընդհանուր ժողովդ նոյն տոմսակաց գնահատութիւնը բարձրացնել և նշանակել նոցա այժմեան գինը։ Եւ վերջապէս, եօթներորդ՝ խորհրդարանիս անդամից որպէս և ժառանգաւորաց Դպրոցի հոգաբարձուաց երկամեայ պաշտօնակատարութեան ժամանակը արդէն լրացած լինելով՝ կինդրէ սա ընդհանուր ժողովդ որ այժմ իսկ համաձայն 10 րդ յօդուածոյ կանոնադրութեան իւրոյ, ընտրէ նոր հոգաբարձուս յիշեալ պաշտօնների համար։

(Ի վերոյ նշանակեալ անդամոց խորհրդարանի)

ԸՀԴ ԽՍԿԱՀԱՆԻ համանման է անդամ խորհրդարանի ԽԱՋԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ.

Պարզաւորութեան ընդհանուր ժողովոյ անդամոց Մարդասիրական Ընկերութեան է 6 Յունուր 1876 ամի։

Մեք ի ներքոյ ստորագրեալ անդամքս Մարդասիրական ընկերութեան Հայոց Նոր-Նախիջևանի ժողովեալ ի միասին հասու եղաք մտից և ծախուց ընկերութեանս և ժառանգաւորաց Դպրոցի սրբոյ Խաչի վանուց վասն 1875 ամի. զըտաք —. որ մատեանները ի գործ դրուած են ըստ կարգին. բ. տասն տոմսակք առաջին ներքին փոխառութեան, երկու տոմսակ երկրորդ ներքին փոխառութեան, վեց 5% գանձատոմսեր արքունի գրամատան և յաւելեալ պատրաստի գումար 9220 ռուբլի 93 կոպ. զոանին ամբողջ առ գանձապահի ընկերութեանս։ Կարգաւորեցաք, նախ՝ Խորհրդարանի արած առաջարկութիւնքը հաստատել և վասն առաջիկայ երկամեայ պաշտօնավարութեան զնոր Հոգաբարձուս ընտրել (որ և ընտրեցաք ըստ բազմութեան ձայնից.) 1. զՏէր Խաչատուր Աւագ քահանայն Զարիֆեանց, 2. Պ. Եպիփան Պոպոյեանց, 3. Պ. Խաչերես Ալաճալեանց, 4. Պ. Յովակիմ Խազիղեանց, 5. Պ. Յովհաննէս Սալթիքեանց, 6. Սարգիս քահանայ Ոսկերչեանց, 7. Պ. Մարկոսն Ալաճալեանց, 8. Պ. Պօղոս Խաթրանեանց, 9. Պ. Յովհաննէս Զայրախեանց, 10. Պ. Խաչատուր Ստեփաննոսեանց, 11. Պ. Մինաս Պալասանեանց, 12. Պ. Գաբրիէլ Տրապզոնցեան։ Որոց առաջարկել գործադրել ընկերութեան դրամագլուխը համաձայն կանոնադրութեան նա և ներկայ 1876 ամին, խորշելով որչափ կարելի է աւելորդ ծախսերէ։ Երկրորդ՝ առաջարկել խորհրդարանի Հոգաբարձուաց՝ արքունի ներքին փոխառութեան գանձատոմսերը հաշուոյ մէջ ցուցանել ներկայ ժամանակիս արժողութեամբը, յամենայն ժամանակի ապահովացնելով զայնս վիճակահանութեանց ժամանակ։ Երրորդ յանձն առնել նորընտիր Հոգաբարձուաց հոգ ունիլ ժառանգաւորաց Դպրոցի աշակերտաց սննդեան մատակարարութեան խնդիրը կանոնաւոր կարգի տակ դրնել, որպէս զի ապագայի մէջ ընկերութիւնս դրժուարութեանց չհանդիպի։ Չորրորդ՝ նախկին Հոգաբարձուաց յայտնել շնորհակալութիւն իւրեանց յանձն առած պաշտօնը սիրով և ջերմեռանդութեամբ կատարելնելնուն համար, և Հինգերորդ՝ խորհրդարանի մատուցած հաշիւը 1875 ամին, հանդերձ ընդհանուր ժողովոյս կարգաւո-

բութեամբը տալ ի տպագրութիւն վասն ընդհանուր տեղեկութեան։

(Ի վերայ ի-ի-ի-նին ոգորութեան Անդամ Մ-ը-ի-ի-ն ընկերութեան։)

Ընդ խնդականին համեմատ է.

Նախագահ խորհրդարանի ընկերութեան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՒԱԳ ՔՀՆՑ. ՉԱՐԻՖԵԱՆՑ.

ԵՐԵՑՓՈԽԱՆՈՒԹԻՒՆ՝ ԱՑՍ ԻՆՔՆ ԳԱՆՁԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ.

(Շրջանի-ի-ին։)

Այն ևս յիշենք, որ կան այնպիսի Երեցփոխաններ, որք 10-12 տարիէ հետէ կ'վարեն իւրեանց պաշտօնն, բայց երբէք հաշիւ չեն տուած, և են այնպիսի Եկեղեցիք, որոց երեք-չորս անգամ տասն, տասն և հինգ ամաց միջոցումն Երեցփոխաններ են փոփոխուած, բայց նոցա հաշիւներն ոչ ոք չէ քննած, թէև նոքա իւրեանց հաշիւներն *) կամ ներկայացրած են կամ չեն ներկայացրած Կոնսիստորիային, բայց և այնոքիկ տուած են յաւերժական լռութեան, պատրուակ բերելով թէ քննութիւնն պարտաւորութիւն է ժողովրդեան և ոչ մեր։ Ահա որպէս ասացի՝ ամենքն էլ յանցաւոր են, բայց նոցանէ ոչ ոք չէ պատասխանատուութեան ենթարկեալ, վասնորոյ և ամենիքեան իբր արդարք։

Այս տեղ զանց անելով քաղաքիս միւս Եկեղեցեաց թերակատար մնացեալ հաշիւների մասին, յառաջ բերենք օրինակի համար միայն սուրբ Գէորգ Մողնիի Եկեղեցւոյ կարեկցութեան արժանի տխուր վիճակն, յորմէ կարող են բարեմիտ ընթերցողքն երևակայել և միւսներն։

Հանդուցեալ Գ. Մ. եանցն երկար տարիներ Մողնիի Երեցփոխանութեան պաշտօնն վարելով և հաշիւ չտալով, ժողովուրդի քրթմնջիւնն և անբաւականութիւնն օր ըստ օրէ սաստկացաւ, վասն որոյ և նա 1867 ամին հրաժարական տուեց Կոնսիստորիային, միայն ինն տարուայ իւր հաշիւներն ներկայացնելով անդ և նորա տեղն ընտրուեցաւ Գ. . Տ. Մ. . . . . : Քանի մի ժամանակ այն ներկայացեալ հաշիւներն մնալով Կոնսիստորիայումն առանց քննութեան, ի վերջոյ Մ . . . եանցէն թէ Կոնսիստորիայէն (ըստ որում է առանց ստորագրութեան), հրատարակեցաւ մի միայն ինն տարուան հաշիւներն տպեալ մի թերթի վերայ, որպէս թէ քննեալ են ի հաշուատեսաց և այն յոյժ անագան, և յորմէ երևեցաւ՝ որ վերոյ յիշեալ ամի սկզբումն Եկեղեցին ունեցել է տէրութեան գանձարանումն տոկոսեօք և Եկեղեցւոյ արկղումն պատրաստի դրամ 38, 947 ռուբլի 91½ կոպ. բայց Նրա ցոյց տուած արդիւնքն կամ ծախքն էի՞ն ուղիղ կամ անուղիղ, մնացած են մինչև ցայսօր առանց քննութեան, ուրեմն և երկբայական։

Տ. Մ. յաճախ բացակայ լինելով քաղաքէս, նշանակեց ինքեան գործակատար զերկու եղբարք Ս . . . . . ։ Երբ Տ. Մ. . . . . վախճանեցաւ, մնաց Նորա հաշիւներն առանց քննութեան Ս. . . . . եղբարց ձեռքին, նոյնպէս և սոքա ևս վախճանեցան, և սոցա հաշիւները նմանօրինակ մնացին առանց քննութեան։

Զկնի մահուան նոցա ընտրուեցաւ Պ. Սահակ Տովեանեանցն։ Սա երեք տարի արդարև փառաւորապէս իւր պաշտօնը շարունակելով, պայծառացրեց Եկեղեցին ներքուստ և արտաքուստ Եկեղեցական դրամով, բայց և սա 1872 ամի վերջերումն հրաժարական տուեց Կոնսիստորիային, և Նորա հաշիւներն ևս մինչև ցայսօր մնացին առանց քննութեան։ Թէ և ոչ ոք չի կասկածիլ Նորա հաշիւների վերայ, այնու ամենայնիւ և այն առանց քննութեան թողնելն չէր առանց նպատակի ի կողմանէ տեղւոյս Հոգևոր կառավարութեան։ Սորան յաջորդեց Պ. Բ. Խ. . . ։

Էս պարոնը տարուայ համարեա չորս ամիսը կ երթայ կ բնակի Բորժոմ ասացեալ ամարանո-

---

(*) Ուղիղը խոստովանելոյ համար պէտք է յաւելուլ, զի բաց ի սակաւուց, բաղում Եկեղեցեաց Երեցփոխանաց հաշիւներն այնքան մթին եւ խառն ի խուռն կմնան, որ եթէ միանգամ օրինաւոր քննութիւն բացուի, խիստ մեծ գումարներ կգտնանն։ Ա.ռ այժմ մեր թեմ. Ատենից եւ Հոգեւոր Կառավարութեանց ուշադրութեան զայս յանձնել բաւական կհամարիմք։

Ծ. Խ.։